10 հուլիսի 2018 թվականի N 776 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 536-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնությունից օգտվելու համար «ՖԱՐՄԱՏԵՔ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկա-յացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 536-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-29-րդ կետերով.

« 20.	3921906000	Պոլիմերային թաղանթ PET/AL/PE	պլաստմասսայե սալիկներ, թաղանթ, ժապավեն և այլ, համամիացման նյութերից	կգ	4000	Չինաստան	10200000
21.	3923301090	Պլաստմասսայե սրվակներ (հավաքածու)	ապրանքների փոխադրման կամ փաթեթավորման համար նախատեսված արտադրանք՝ պլաստմասսայից. պլաստ-մասսայե խցաններ, կափույր-ներ, կափարիչներ և այլ փակման միջոցներ՝ պլաստ-մասսայից, այլ	կգ	5000	Թայվան	24200000
22.	3923301090	Պլաստմասսայե սրվակներ, կաթոցիչներ, խցաններ	ապրանքների փոխադրման կամ փաթեթավորման համար նախատեսված արտադրանք՝ պլաստմասսայից. պլաստ-մասսայե խցաններ, կափույրներ, կափարիչներ և այլ փակման միջոցներ՝ պլաստմասսայից, այլ	կգ	5000	Հունաստան	22200000
23.	1702305000	Գլյուկոզա մոնոհիդրատ	սպիտակ բյուրեղային փոշի, ագլոմերացված կամ ոչ ագլո-մերացված	կգ	5000	Ֆրանսիա	7240000
24.	3913900000	Դեքստրան 40	առաջնային վիճակում գտնվող բնական պոլիմերներ (օրինակ՝ ալգինաթթու) կամ մոդիֆի-կացված բնական պոլիմեր-ներ (օրինակ՝ կարծրացած սպիտակուցներ, բնական կաուչուկի քիմիական ածանցյալներ)	կգ	1500	Չինաստան	27000000
25.	3913900000	Դեքստրան 70	առաջնային վիճակում գտնվող բնական պոլիմերներ (օրինակ՝ ալգինաթթու) կամ մոդիֆի-կացված բնական պոլիմեր-ներ (օրինակ՝ կարծրացած սպիտակուցներ, բնական կաուչուկի քիմիական ածանցյալներ)	կգ	600	Չինաստան	14400000
26.	2501009900	Նատրիումի քլորիդ	կպչունությանը խոչընդոտող հավելումներ պարունակող կամ չպարունակող, ջրում լուծված կամ չլուծված աղ (ներառյալ սեղանի և դենա-տուրացված), ծովային ջուր	կգ	30000	Ավստրիա	16092000
27.	2905430000	Մանիտոլ	մանիտ	կգ	2000	Ֆրանսիա	8560000
28.	3505105000	Հիդրոքսիէթիլ օսլա	պարզ կամ բարդ եթերի վերածված օսլաներ	կգ	800	Չինաստան	24960000
29.	2922498500	Պրոկաին հիդրոքլորիդ	ամինոմիացություններ, որոնք ներառում են թթվածին պա-րունակող ֆունկցիոնալ խումբ (ամինոսպիրտեր), բացառությամբ այն	կգ	50	Չինաստան	1465000

			միացությունների, որոնք պարունակում են մեկ տիպից ավելի թթվածին պարունակող ֆունկցիոնալ խումբ, դրանց աղերը				

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «1 166 476 974» թիվը փոխարինել «1 322 793 974» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ